



*Handwritten signature*

Զանգակատում եմ՝  
ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական  
մասնագիտությունների գծով  
պրոֆեսոր Է. ԱՍՐԻՅԱՆ

26.10.2020

**ԿԱՐԾԻՔ**

Անի Դավիթի Շիրինյանի «Դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները Չարենցի ստեղծագործություններում» թեմայով Ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին: (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի 2020 թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 2)

Ելույթ ունեցան պրոֆ. Վ. Գաբրիելյանը, դոց.դոց. Լ. Սեյրանյանը, Ա. Ղազարյանը, Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Անի Դավիթի Շիրինյանի «Դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները Չարենցի ստեղծագործություններում» թեմայով աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որտեղ գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում էլ կայանալու է պաշտպանությունը: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ առ այսօր մեզանում առանձին ուսումնասիրությամբ հանգամանալից անդրադարձ չի եղել Չարենցի ստեղծագործության մեջ կարևոր տեղ զբաղեցնող դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվների առկայությանը: Սրանով արդեն իսկ գնահատելի է դառնում Անի Շիրինյանի՝ որպես ատենախոսություն ներկայացված սույն հետազոտությունը:

Ուսումնասիրությունը առավել գնահատելի է նրանով, որ ատենախոսը ջանադիր, մանրակրկիտ որոնումներ է կատարել, բառ առ բառ, արտահայտություն առ արտահայտություն գննել է Չարենցի չափածո տեքստը, դիցաբանությանը վերաբերող բառարաններն ու աշխատությունները, Հին ու Նոր կտակարանները, տեսանելի օրինակներով ցույց տվել Չարենցի խոսքը սնուցող աղբյուրները:

Նյութի մեկնաբանության ընթացքում ներկայացվում են բանաստեղծի գեղագիտական, փիլիսոփայական, կրոնական ըմբռումները, մասամբ բնութագրվում են տվյալ գործը, ստեղծման ժամանակը, գրական ուղղության խնդիրը: Այս ամենը շարադրված է գրագետ, գրականագիտության ընդունելի մակարդակով, և ամբողջության մեջ ատենախոսությունը (հատկապես երկրորդ և երրորդ գլուխները) հաջողված է:

Ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից բաղկացած ատենախոսությունը թեմայի քննաբանման հաջողված նմուշ է: Ուսումնասիրության քայլընթացը մեկնարկում է խորհրդապաշտական ուղղության գաղափարագեղագիտական համակարգին, հեթանոսական գրական շարժմանը, 20-րդ դարասկզբի հայտնի իրադարձությունների ներագդումով լայն տարածում ստացած աթեիստական ըմբռումներին չարենցյան անդրադարձների քննությամբ, որին հաջորդում է չարենցյան բնագրի՝ հեթանոսական պատկերացումների ավազանից սնվող գեղարվեստական լուծումների մեկնաբանումը՝ դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվների զուգահեռումով: Գիտականորեն առավել համակարգված երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է գրողի երկերում ազգային և համամարդկային գեղարվեստական ավանդների ուսումնասիրությանը, որը ատենախոսն իրագործում է չարենցյան երկերում առկա, նաև մահվան տեսիլներում դրսևորվող սուրբգրային անդրադարձների, աստվածաշնչյան մոտիվների դիտարկումով, ազգային գոյաբանական ընդհանրացումներով: Սուրբգրային և դիցաբանական զուգահեռումների սկզբունքը կիրարկվում է նաև երրորդ գլխում: Հատկապես հաջողված, գիտականորեն հիմնավոր են աստվածաշնչյան զուգահեռները, որոնց շարքում առանձնահատուկ է անառակ որդու միֆոլոգեմի հայտնատեսումը չարենցյան տեքստում՝ հոր և Աստծո՝ ստեղծագործության վերջին շրջանի ընկալումներում:

Ներածության մեջ ատենախոսն իր աշխատանքի նորույթն է համարում «մեր գրականագիտության մեջ առաջին անգամ» չարենցյան ստեղծագործությունները «ավելի ամբողջական, թեմատիկ-գաղափարական ավելի լայն ընդգրկումների մեջ» ներկայացնելու փորձը: Նորույթը, կարծում ենք, հարկ էր առավել առարկայական և կոնկրետ ձևակերպել՝ մատնանշելով չարենցյան երկերում առկա աստվածաշնչյան, դիցաբանական մոտիվների և միջտեքստային դրսևորումների քննությանն ուղղված հայ գրականագիտական փորձը նոր ու կարևոր դիտարկումներով հարստացնելուն և համակարգելուն միտված սույն ջանքը:

Փաստական ծավալուն նյութի մշակմամբ և հիմնականում շահեկան կիրառմամբ, թեմային առնչվող խորհրդապատկերային համակարգի նկարագիրը պարզորոշ ու ճշգրտորոշ արժեքավոր մեկնաբանություններով ու եզրակացություններով հատկանշվող, ընդհանուր առմամբ

հաջողված ուսումնասիրությունն անուրանալիորեն կշահեր հետևյալ դիտարկումների և դիտողությունների նկատառման դեպքում:

Արժանին հատուցելով պետք է նշել, որ ատենախոսը նկատելի առանձնացրել և յուրովսանն քննաբանել է Չարենցի ստեղծագործության՝ թեմային առնչվող խորհրդապատկերային լուծումների հիմնական բաղադրիչները, որոնք կառուցվածքային-նշանագիտական վերլուծության հետևողական կիրարկմամբ հարկ էր համակարգել՝ գրականության ցանկում մատնանշված լուծմանյան աղբյուրի տեսական ըմբռնումները հետազոտության մեջ տեսանելի դարձնելով և հանրագումարային ընդհանրացմամբ ներկայացնելով: Ելքային վերացարկման պարագայում հնարավոր էր նկատել, որ հիշյալ նշանային բաղադրակազմը հավաքվում-կիզակետվում է կյանք-մահ գոյաբանական գույզի շուրջ, ուր կյանքը, կենսարար սկզբունքը գեղարվեստորեն հայտնակերպող շարքը ներկայացնում են կրակը, արևը, Վահագնը, Ռան, Ազնին (կրակի և զոհաբերության խորհրդապատկերային լիցքով), Աստղիկը, կինը, Մարի էգ թռչունը, արյունը, արվեստը, իսկ մահվան և անդրաշխարհի այլագոյացումները չարենցյան խորհրդապատկերային համակարգում հայտնակերպվում են Ամենտի, Աիդ, Գողգոթա, Աթիլլա, Շամիրամ, Նեո, Մոլոք և այլ անվանումներով ու անուններով դրսևորվող պատկերակերպարային լուծումներով: Այս համակարգում կարևոր դեր ունեն գոհաբերման և հարության միֆոլոգեմները, որոնք չարենցյան բնագրում աշխատում են «կյանքի, մահի ամեհի աղջամուղջի», հավիտենական տարերային շրջափոխման, մահվան և հարության, ողջակիզման, զոհաբերման ու վերածննդի, կատարելացման ու ինքնանորոգման մթնոլորտում, ուր առանձնահատուկ խորհրդապատկերային արժեք ունեն փյունիկը, Արա Գեղեցիկի և Ադոնիսի կերպարները: Կյանք-մահ հավիտենական շրջապտույտի և ինքնանորոգման շղթայում կարևոր խորհրդապատկերային լուծումներ են անցումը պատկերավորող Կերբերը, Սֆինքսը՝ հնի և նորի սահմանին, Մուման՝ որպես «արշալույսների արգանդ»: Արվեստի՝ կենսարար սկզբունքի գոյաբանական կշիռը պատկերավորող նշաններ են Նավզիկեն և Հետերա-երազը: Հավիտենական փոխակերպումների և շրջապտույտի իմաստային դաշտն ամբողջանում է կրակի՝ միաժամանակ ավերող ու կառուցող սկզբունքի երկվալենտության գեղարվեստական արտացոլումներով: Երկվալենտությունը դրսևորվում է նաև երկրային-երկնային եզրերի, Հավերժի, Երազի և իրականության չարենցյան ընկալումներում: Հիշատակված դիցաբանական արժարձումները և աստվածաշնչյան միֆոլոգեմներն ու մոտիվները նկատվել են Շիրինյանի կողմից և համապատասխանաբար մեկնաբանվել, սակայն նախընտրելի էր դրանք դիտարկել համակարգի մեջ՝ արտացոլելով նաև եզրակացություններում: Ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է

միֆաքննադատության, համեմատական և պատմահամեմատական մեթոդներով, որոնցից առաջինը մատնանշված չէ:

Կուզենայինք նաև առանձին էջեր, արտահայտություններ, բնութագրություններ տեսնել խմբագրված՝ հստակեցված, թերևս տեղաշարժված.

1. Ա. Չաքարյանի և Չ. Էդոյանի անունները նշվում են ոչ թե չարենցագետներից առաջինների շարքում, այլ հետո, այն էլ՝ իբրև հեթանոսությանը անդրադարձողներ, բայց հիշված են Գ. Հովսեփյանը, Չ. Չարխչյանը (էջ 4):
2. Ներածության մեջ «Աշխատանքի ընդհանուր բնութագիրը» հատվածը պետք էր տանել վերջ՝ առանց «Ներածության մեջ անդրադարձ է կատարվում... մեթոդաբանությանը» պարբերության, որովհետև ներածությունը արդեն կա, կարդացվել է (էջ 7): Իսկ «հարցի պատմությունը» գրեթե չկա:
3. Հասկանալի չէ հետևյալ մտքի հեղինակային մեկնաբանությունը. «Քրիստոնեությունը հայտարարվեց հոգևորի տիրապետություն, ինչը սկիզբ դարձավ նոր մտածողության, ըմբռնումների ու ճաշակի...» (էջ 9):
4. «Ես կ'երգեմ գինին» Դանիել Վարուժանի «Հեթանոս երգերի» բնաբանն է, ոչ թե մուտքի բանաստեղծության, մեջբերումն էլ կապ չունի «գինու» հետ (էջ 25):
5. Ավելորդ են 20-30-ական թթ. մեզանում աթեիզմի դեմ պայքարի մանրամասն նկարագրությունները (30-34 էջերը), որոնք կիսով չափ և ավելի կրճատման կարիք ունեն:
6. Երբորդ գլխի վերնագրում միջակետից հետո արված հավելումը՝ «Չարենցը նորարար», պետք է հանել, քանի որ նորարարության մասին գրեթե խոսք չկա, եթե չհաշվենք այն մեկ հայտարարական նախադասությունը, թե Չարենցը ընտրել է նաև բանաստեղծության «այնպիսի եղանակներ, որոնք տիրապետող էին հունական և հռոմեական գրականության մեջ» (էջ 118): •
7. Վերջում պիտի լինի՝ «Եզրակացություններ», քանի որ թվագրված, առանձնացված են 9 եզրակացություն և նախադիր մի հղում, թե ինչի եզրակացություններն են: Եզրակացությունները շատ ընդհանրական են. ընդհանրապես Չարենցի մասին են և ոչ հատկապես այն հարցերի, որոնք քննարկված են ատենախոսության մեջ: Իսկ «ստեղծում է անցյալի ու ապագայի կենսաժամանակը» նախադասությանը պիտի հավելվի «ներկայի» բառը. ի վերջո նա ներկայի բանաստեղծն է (հիշենք «Ժամանակիդ շունչը դարձիր» տողը):

Մակայն այս դիտողությունները թելադրված են աշխատանքը ավելի կոտ տեսնելու ցանկությամբ միայն և մեծ հաշվով չեն ստվերում ընդհանուր առմամբ հաջողված և

հետաքրքրությամբ կարդացվող ուսումնասիրության արժանիքները: Չնայած կատարված դիտողություններին և դիտարկումներին՝ Չարենցի ստեղծագործության դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվների քննությանն ուղղված ատենախոսությունը հատկանշվում է գիտական բարեխղճությամբ և ուշագրավ եզրահանգումներով, ուստի և արժանի է հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Անի Դավիթի Շիրինյանի «Դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները Չարենցի ստեղծագործություններում» թեմայով ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ուստի և կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության

ամբիոնի վարիչ՝  Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիստի քարտուղար՝  Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Ամբիոնի վարիչի ստորագրությունը

հաստատում եմ՝



ԵՊՀ գիտքարտուղար Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ